

«Բնտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության
խորհրդի նիստի

ք. Երևան

18 սեպտեմբերի 2020թ.

Մասնակիցների ցուցակ՝

- | | |
|------------------------|------------------------|
| 1. Անդրանիկ Ալեքսանյան | 7. Լիաննա Գալստյան |
| 2. Աննա Կարախանյան | 8. Միսակ Խաչատրյան |
| 3. Արամ Վերդյան | 9. Սիրանուշ Վարդանյան |
| 4. Արման Ներսիսյան | 10. Քրիստինա Հակոբյան |
| 5. Գրիգորի Սաղյան | 11. Քրիստինե Գյունջյան |
| 6. Իգոր Մկրտումյան | |

Նիստին ներկա էին նաև կազմակերպության անդամներ՝ Նարինե Դերձակյանը, Վահան Հովսեփյանը, Վեսմիրա Հարությունյանը:

Նիստը նախագահում էր Իգոր Մկրտումյանը: Նիստի քարտուղար ընտրվեց Քրիստինա Հակոբյանը: Նախագահողը տեղեկացրեց, որ քվորումն ապահովված է և առաջարկեց հաստատել օրակարգը: Օրակարգի վերաբերյալ հնչեցին առաջարկություններ: Արդյունքում, հաստատվեց հետևյալ օրակարգը.

Օրակարգ՝

1. «Բնտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության համաժողովի արտահերթ ժողով գումարելու մասին:
2. «Բնտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության խորհրդի նիստերի անցկացման կարգը սահմանելու մասին:
3. «Բնտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» սահմանափակ պատասխանավորյալը ընկերության փաստաթղթաշրջանառության կարգը հաստատելու մասին:
4. Տեխնիկական հարցերով աշխատանքային խմբի առաջարկություններին հավանություն տալու մասին:

1. «Բնտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության համաժողովի արտահերթ ժողով գումարելու մասին:

Հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ պարոն Իգոր Մկրտումյանը՝ առաջարկելով խորհրդին գումարել կազմակերպության համաժողովի արտահերթ ժողով՝ օրակարգի նախագծում ընդգրկելով «Բնտերնետ հանրություն» ՀԿ-ի՝ «Հայաստանի օպերատորների միություն» ՀԿ-ին անդամագրվելու վերաբերյալ հարցը:

Քննարկման արդյունքում կազմակերպության խորհուրդը ձայների 10 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ (խորհրդի 1 անդամ չի մասնակցել քվեարկությանը) հարաբերակցությամբ որոշեց՝

Որոշում՝ 1. 2020 թվականի սեպտեմբերի 29-ին ժամը 13:00-ին (ժողովի բացման ժամկետ) գումարել կազմակերպության համաժողովի արտահերթ ժողով՝ հետևյալ օրակարգի նախագծով.

«Հայաստանի օպերատորների միություն» հասարակական կազմակերպությանը անդամագրվելու մասին:

2. Սահմանել, որ ժողովն անցկացվում է հեռակա կարգով՝ «Electionbuddy» էլեկտրոնային համակարգով՝ մինչև 2020 թվականի հոկտեմբերի 2-ը ժամը 23:00-ն (ժողովի փակման ժամկետ):

2. «Բնտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության խորհրդի նիստերի անցկացման կարգը սահմանելու մասին:

Հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ պարոն Իգոր Մկրտումյանը՝ նշելով, որ խորհրդի նիստերի անցկացման կարգի նախագիծը նախապես ներկայացվել է խորհրդի անդամներին՝ դիտողություններ և առաջարկություններ ստանալու նպատակով: Որից հետո ներկայացվեցին խորհրդի անդամների կողմից ստացված առաջարկությունները:

Քննարկման արդյունքում կազմակերպության խորհուրդը՝

- ձայների 9 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ (խորհրդի 1 անդամ չի մասնակցել քվեարկությանը) հարաբերակցությամբ ընդունեց կազմակերպության խորհրդի նիստերը, նիստի քարտուղարի փոխարեն, կազմակերպության աշխատակազմի կողմից արձանագրվելու վերաբերյալ առաջարկությունը,
- ձայների 10 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ (խորհրդի 1 անդամ չի մասնակցել քվեարկությանը) հարաբերակցությամբ ընդունեց նիստը նախագահողի և քարտուղարի կողմից արձանագրությունը ստորագրելու ժամկետ սահմանելու վերաբերյալ առաջարկությունը՝ սահմանելով 14-օրյա ժամկետ ստորագրման համար,
- ձայների 10 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ (խորհրդի 1 անդամ չի մասնակցել քվեարկությանը) հարաբերակցությամբ որոշեց սահմանել «Բնտերնետ հանրություն» ՀԿ-ի խորհրդի նիստերի անցկացման կարգը և ուժը կորցրած ճանաչել կազմակերպության վարչության նիստերի նախապատրաստման և անցկացման կարգը հաստատելու մասին որոշումը:

Խորհրդի կողմից տրվեց նաև արձանագրային հանձնարարական:

Որոշում՝ 1. Սահմանել «Բնտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության խորհրդի նիստերի անցկացման կարգը:

2. Ուժը կորցրած ճանաչել «Բնտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության վարչության 2017 թվականի մարտի 3-ի «Բնտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության վարչության նիստերի նախապատրաստման և անցկացման կարգը հաստատելու մասին» N 8Լ որոշումը:

Արձանագրային հանձնարարական՝

Կազմակերպության տնօրենին՝ խորհրդի նիստի անցկացման ժամանակի, վայրի, եղանակի, օրակարգի նախագծի մասին էլեկտրոնային նամակի ստացման վերաբերյալ խորհրդի անդամի կողմից հետադարձ ավտոմատացված նամակ

չստանալու դեպքում նիստի անցկացման օրվանից 1 օր առաջ ապահովել տվյալ խորհրդի անդամի տեղեկացումը հեռախոսազանգի միջոցով:

3. «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության փաստաթղթաշրջանառության կարգը հաստատելու մասին:

Հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ պարոն Բգոր Մկրտումյանը՝ նշելով, որ կարգի նախագիծը նախապես ներկայացվել է ի կարծիքի, դիտողություններ և առաջարկություններ չեն ներկայացվել:

Առաջարկություն հնչեց հաստատել ներկայացված կարգը: Որպես ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի լիազորություններն իրականացնող, կազմակերպության խորհուրդը ձայների 10 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ (խորհրդի 1 անդամ չի մասնակցել քվեարկությանը) հարաբերակցությամբ որոշեց՝

Որոշում՝ Հաստատել «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության փաստաթղթաշրջանառության կարգը:

4. Տեխնիկական հարցերով աշխատանքային խմբի առաջարկություններին հավանություն տալու մասին:

Հարցի վերաբերյալ ելույթ ունեցան պարոնայք Բգոր Մկրտումյանը և Միսակ Խաչատրյանը, ովքեր ներկայացրեցին AMNIC-ի ծրագրային ապահովման վերազինման նպատակահարմարությունն ուսումնասիրելու և եզրակացություն տալու նպատակով ստեղծված տեխնիկական հարցերով աշխատանքային խմբի ուսումնասիրության արդյունքները և առաջարկությունները:

Ելույթների ավարտից հետո ծավալվեց քննարկում, որի ընթացքում պարոն Միսակ Խաչատրյանը տվեց պարզաբանումներ նիստի մասնակիցների կողմից բարձրացված հարցերին: Քննարկման արդյունքում կազմակերպության խորհուրդը՝

- ձայների 9 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ (խորհրդի 1 անդամ չի մասնակցել քվեարկությանը) հարաբերակցությամբ հավանություն տվեց AMNIC-ի ծրագրակազմը ժամանակակից «Application Programming Interface» (API) ծրագրով ապահովելու նպատակով համապատասխան «Request for Comments» (RFC) ստանդարտները, «Extensible Provisioning Protocol» (EPP) և «Registration Data Access Protocol» (RDAP) արձանագրությունները եռամսյա ժամկետում ուսումնասիրելու վերաբերյալ առաջարկությանը՝ «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ-ի տնօրեն Արման Ներսիսյանին առաջարկելով նշված ժամկետում ուսումնասիրել համապատասխան ստանդարտները և արձանագրությունները,
- ձայների 10 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ (խորհրդի 1 անդամ չի մասնակցել քվեարկությանը) հարաբերակցությամբ հավանություն տվեց հայատառ հասցեագրումով էլեկտրոնային փոստ մշակելու վերաբերյալ առաջարկությանը,
- ձայների 10 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ (խորհրդի 1 անդամ չի մասնակցել քվեարկությանը) հարաբերակցությամբ հավանություն տվեց արդիականացման ենթակա դոմենային անունների համակարգի (DNS) սերվերների սարքավորումների ցանկը խորհրդի հաստատմանը ներկայացնելու, ինչպես նաև այդ սարքավորումների ձեռքբերման վերաբերյալ խորհրդին առաջարկություններ ներկայացնելու վերաբերյալ

առաջարկությանը՝ «Բնտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ-ի տնօրեն Արման Ներսիսյանին առաջարկելով խորհրդի հաստատմանը ներկայացնել արդիականացման ենթակա սարքավորումների ցանկը, ինչպես նաև խորհրդին ներկայացնել առաջարկություններ դրանց ձեռքբերման վերաբերյալ:

- Որոշում՝
1. Հավանություն տալ տեխնիկական հարցերով աշխատանքային խմբի առաջարկություններին:
 2. Առաջարկել «Բնտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Արման Ներսիսյանին՝
 - 1) «Բնտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության խորհրդի հաստատմանը ներկայացնել արդիականացման ենթակա դոմենային անունների համակարգի (DNS) սերվերների սարքավորումների ցանկը, ինչպես նաև խորհրդին ներկայացնել առաջարկություններ այդ սարքավորումների ձեռքբերման վերաբերյալ,
 - 2) AMNIC-ի ծրագրակազմը ժամանակակից «Application Programming Interface» (API) ծրագրով ապահովելու նպատակով եռամսյա ժամկետում ուսումնասիրել համապատասխան «Request for Comments» (RFC) ստանդարտները, «Extensible Provisioning Protocol» (EPP) և «Registration Data Access Protocol» (RDAP) արձանագրությունները:

Օրակարգային հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնելուց հետո, մինչև նիստը ավարտված հայտարարելը, տեղեկատվություն ներկայացվեց դոմենային անունների վեճերի լուծման արբիտրաժի վերաբերյալ ընթացող բանակցությունների, վրացական ազգային դոմենային անունի իրավասությունների փոխանցման մասին, ինչպես նաև տրվեց հանձնարարական տարեկան անդամավճարի նոր չափի վերաբերյալ «Բնտերնետ հանրություն» ՀԿ-ի անդամներին տեղեկացնելու մասին:

Նիստի նախագահող՝

Նիստի քարտուղար՝

Իգոր Սկրտունյան

Քրիստինա Հակոբյան